(Չի գործում 2017թվականի ապրիլի 1-ից)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 26/11/2010թ թիվ 27-Լ որոշմամբ
Փոփոխված է 29/12/2010թ թիվ 47-Լ որոշմամբ
04/02/2011թ թիվ 14-Լ որոշմամբ
22/07/2011թ թիվ 63-Լ որոշմամբ
01/12/2011թ թիվ 78-Լ որոշմամբ
20/12/2012թ թիվ 18-Լ որոշմամբ
13/12/2013թ թիվ 42-Լ որոշմամբ
10/04/2014թ թիվ 13-Լ որոշմամբ
29/05/2014թ թիվ 19-Լ որոշմամբ
16/12/2014թ թիվ 40-Լ որոշմամբ
25/02/2015թ թիվ 49-Լ որոշմամբ
31/03/2015թ թիվ 54-Լ որոշմամբ
31/08/2015թ թիվ 81-Լ որոշմամբ
18/12/2015թ թիվ 99-Լ որոշմամբ
25/04/2016թ թիվ 16-Լ որոշմամբ
25/07/2016թ թիվ 27-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«10» օգոստոսի 2016թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-014
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ)

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով կարգավորվում են ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես սահմանվում են՝

1) փորձաքննություն իրականացնելու իրավունք ունեցող անձանց ներկայացվող պահանջները,

2) փորձագետների որակավորման և որակավորումից զրկման կարգը, հիմքերը և պայմանները,

3) փորձագետների հետ կնքվող աշխատանքային և պատվիրակման պայմանագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այդ պայմանագրերի՝ Բյուրոյում գրանցման կարգն ու պայմանները,

4) փորձագետների կողմից տրվող եզրակացություններին ներկայացվող նվազագույն պահանջները:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **ապահովագրական ընկերություն՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերություն,

2) **Բյուրո՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

3) **Խորհուրդ՝** Բյուրոյի խորհուրդ,

4) **Օրենք՝** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

5) **Որակավորման հանձնաժողով՝** Խորհրդին կից ստեղծված խորհրդակցական բնույթի որոշումներ կայացնող հանձնաժողով, որի որոշման հիման վրա Խորհուրդը սույն կանոններով սահմանված կարգով որակավորում է փորձագետներին,

6) **Կոմիտե՝** Բյուրոյում գործող մարմին, որը սույն կանոններով նախատեսված կարգով ստուգում է փորձագետների հետ կնքված պայմանագրերի համապատասխանությունը և որի եզրակացության հիման վրա Բյուրոյի գործադիր տնօրենը գրանցում է փորձագետների հետ կնքված պայմանագրերը,

7) **փորձագետ՝** ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնելու որակավորում ունեցող ֆիզիկական անձ կամ կազմակերպություն (այսուհետ նաև՝ փորձագիտական կազմակերպություն), որն ապահովագրական ընկերության հետ կնքված աշխատանքային կամ պատվիրակման պայմանագրի հիման վրա իրավասու է իրականացնել ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն,

8) **նշանակալից մասնակից՝** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն նշանակալից մասնակցություն ունեցող անձ,

9) **Ելակետ 1՝** պատահարի մասնակիցների կողմից վարչական վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու դեպքում՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կազմած՝ պատահարի հանգամանքները և վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու համաձայնությունը ամրագրող փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն,

10) **Ելակետ 2՝** Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմին կողմից կազմված՝ ՃՏՊ վայրի սահմանված ձևով սխեմա և (կամ) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից տրամադրված ՃՏՊ-ի ամբողջական տեսագրությունը: ***(2-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)***

3. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

4. Ապահովագրական ընկերությունները (Բյուրոն) Օրենքով կամ Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում փորձաքննություն նշանակելիս ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննությունը կարող են հանձնարարել (պատվիրել) միայն այն փորձագետներին, որոնց հետ կնքված աշխատանքային (պատվիրակման) պայմանագիրը, սույն կանոնների համաձայն, գրանցվել է Գործադիր տնօրենի կողմից՝ բացառությամբ Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի և քրեական հետապնդման մարմինների, որոնց ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն պատվիրելու համար պայմանագրի առկայություն և (կամ) գրանցում պարտադիր չէ: Ընդ որում, փորձաքննության պատվիրում և ստացում է համարվում նաև Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի և քրեական հետապնդման մարմինների կազմած համապատասխան ակտը (արձանագրություն, որոշում, եզրակացություն կամ այլ նմանատիպ փաստաթուղթ) ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից որպես փորձագիտական եզրակացություն ընդունելը: Սույն կետով սահմանված կարգով պատվիրված և ստացված փորձաքննության արդյունքները կիրառելի են տվյալ պատահարում ներգրավված բոլոր ապահովագրական ընկերությունների (Բյուրոյի) համար,

բացառությամբ սույն կանոնների 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված փորձաքննության արդյունքների, որոնք կիրառելի են միայն համապատասխան համաձայնությունը տրամադրած ապահովագրական ընկերությունների (Բյուրոյի) համար: ***(4-րդ կետը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)***

4.1. Ապահովագրական ընկերությունները (Բյուրոն) ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունը նշանակում են սույն կանոնների Ձև 6-ով սահմանված պատվերը ներկայացնելու միջոցով: Ընդ որում, Ձև 6-ի 2.1.1-րդ դաշտով նախատեսված հարցադրումը պարտադիր է և մշտապես ներկայացվում է փորձագետին, իսկ Ձև 6-ի 2.1.2-րդ և (կամ) 2.1.3-րդ դաշտերով նախատեսված հարցադրումները ներկայացվում են պատվեր ներկայացնողի հայեցողությամբ՝ ի լրումն Ձև 6-ի 2.1.1-րդ դաշտով նախատեսված հարցադրման: Ձև 6-ում նշված հարցադրումներից տարբերվող հարցադրումներ պատվերում չեն կարող ներառվել, իսկ ներառվելու դեպքում՝ փորձագետի կողմից հաշվի չեն առնվում փորձաքննություն իրականացնելիս: Ապահովագրական ընկերությունները (Բյուրոն) իրավունք չունեն փորձաքննության հետ կապված փորձաքննության պատվերից բացի այլ գրավոր կամ բանավոր ցուցումներ, ուղղորդումներ և (կամ) հանձնարարություններ տալ փորձագետին: ***(4.1-րդ կետը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)***

4.2. Փորձաքննության պատվերին կցվում են համապատասխան պատահարի խմբի համար Աղյուսակ 1-ով նախատեսված ելակետային տվյալները (փաստաթղթերն ու նյութերը):

Աղյուսակ 1

Պատահարի խումբը	**Փաստաթղթերի (նյութերի) ցանկը**
Տվյալ պատահարի գծով չի իրականացվել քրեական և (կամ) վարչական վարույթ, և չի հարուցվել քաղաքացիական գործ	Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի պատճենները (լուսապատճենները)
	Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույք վնասված լինելու դեպքում՝ վերջինիս նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները (լուսապատճենները)
	Ելակետ 1-ի պատճենը (լուսապատճենը) և Ելակետ 2-ի պատճենը (լուսապատճենը) կամ էլեկտրոնային տարբերակը
	Առկայության դեպքում՝ ՃՏՊ-ի վայրում իրականացված լուսանկարների և (կամ) տեսագրության էլեկտրոնային կրիչը (ֆայլերը)
Տվյալ պատահարի գծով իրականացվել է քրեական և (կամ) վարչական վարույթ կամ հարուցվել է	Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի պատճենները (լուսապատճենները)
	Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույք վնասված լինելու դեպքում՝ վերջինիս նույնականացման տվյալները

քաղաքացիական գործ	պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները (լուսապատճենները)
	Տվյալ պատահարի գծով հարուցված գործով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից ընդունված քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման կամ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացության և (կամ) որոշման և այդ որոշման (եզրակացության) հիմքում ընկած փաստաթղթերի (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) պատճենները (լուսապատճենները)
	Առկայության դեպքում՝ պատահարի վայրում իրականացված լուսանկարների և (կամ) տեսագրության էլեկտրոնային կրիչը (ֆայլերը)
Փորձաքննության պատվերին կից Բյուրոյի և (կամ) ապահովագրական ընկերությունների կողմից կարող են ներկայացվել նաև հետևյալ փաստաթղթերը և (կամ) նյութերը՝ 1) Բյուրոյի որակավորման հանձնաժողովի կողմից թույլատրված համակարգչային ծրագրերով ստացված պատահարի վայրի սխեման՝ հիմնված բացառապես լուսանկարների և տեսաձայնագրությունների վրա, 2) պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա՝ ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից (գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալները:	

(4. 2-րդ կետը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)

4.3. Փորձաքննության իրականացման համար Աղյուսակ 1-ով նախատեսված փաստաթղթերից բացի այլ փաստաթղթերի և (կամ) նյութերի ներկայացումն արգելվում է, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ: ***(4.3-րդ կետը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)***

4.4. Ապահովագրական ընկերությունները (Բյուրոն) պատասխանատվություն են կրում փորձաքննության պատվերին կից Աղյուսակ 1-ով նախատեսված և իրենց տրամադրության տակ առկա ելակետային տվյալների ոչ ամբողջական կամ թերի ներկայացման հետևանքով առաջացած վնասների հատուցման համար: ***(4.4-րդ կետը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)***

4.5. Փորձագետը պարտավոր է համապատասխան պատվերն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել փորձաքննություն և պատվեր ներկայացրած անձին տրամադրել փորձագիտական եզրակացություն կամ 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր բացատրություն: Ընդ որում՝ սույն կանոնների համաձայն, որպես փորձաքննության անհնարինությունն առաջացնող հիմք կարող են դիտարկվել միայն ներկայացված ելակետային տվյալների անբավարարությունը և (կամ)

անհամապատասխանությունը սույն կանոններով սահմանված պահանջներին: ***(4.5-րդ կետը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)***

4.6. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են Ելակետ 1-ի և Ելակետ 2-ի հիման վրա իրենց կողմից նշանակված փորձաքննությունների դեպքում Բյուրոյի կողմից ստեղծված միասնական էլեկտրոնային հարթակում (միասնական էլեկտրոնային հարթակի մանրամասները և դրա օգտագործման ուղեցույցը հաստատվում է Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից և տրամադրվում ապահովագրական ընկերություններին) մուտքագրել հետևյալ տեղեկատվությունը հետևյալ ժամկետներում՝

1) տեղեկատվություն տվյալ դեպքով ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննություն նշանակված լինելու մասին՝ փորձագետին փորձաքննության պատվեր տալու օրը,

2) ստացված փորձաքննության արդյունքները՝ դրանք ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: ***(4.6-րդ կետը լրաց. է 25.07.2016 թիվ 27-L)***

5. Ապահովագրական ընկերությունները պետք է ունենան սույն կանոնների համաձայն Բյուրոյում գրանցված գործող պայմանագրեր Բյուրոյի կողմից որակավորված առնվազն 2 փորձագետի հետ՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննության իրականացման հնարավորությունը:

6. Փորձագետն իրավունք ունի իրականացնել ցանկացած տեսակի ԱՊՊԱ պատահարի պատճառի փորձաքննություն:

7. ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնելու որակավորում ունեցող անձինք են համարվում Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինը, քրեական հետապնդման մարմինները, սույն կանոնների 4-րդ կամ 8-րդ գլխով սահմանված կարգով որակավորում ստացած ֆիզիկական անձը կամ փորձագիտական կազմակերպությունը, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Ամեն դեպքում, տվյալ պատահարի գծով Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից համապատասխան ակտ (արձանագրություն, որոշում, եզրակացություն կամ այլ նմանատիպ փաստաթուղթ) կազմվելու դեպքում սույն կանոնների 69-րդ կետով նախատեսված տեղեկացումը տրամադրած ապահովագրական ընկերությունների կողմից որպես առաջնային փորձագիտական եզրակացություն պետք է ընդունվի հենց այդ ակտը, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: Ընդ որում, Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը համարվում են սույն կանոնների իմաստով փորձագիտական եզրակացություն, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

1) Ելակետ 1-ում պատահարին մասնակից վարորդներից միայն մեկի կողմից կատարվել է «Մեղավոր եմ ամբողջությամբ» նշումը, իսկ մյուսի (մյուսների) կողմից՝ «Մեղավոր չեմ ամբողջությամբ» նշումը (նշումները), և «Մեղավոր եմ ամբողջությամբ» նշում կատարած վարորդի վարած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից

բխող պատասխանատվությունը պատահարի պահին ապահովագրած ապահովագրական ընկերությունը (գործող ԱՊՊԱ պայմանագրի բացակայության դեպքում՝ Բյուրոն) համաձայն է այդ նշմանը: Սույն ենթակետով նախատեսված դեպքում որպես փորձաքննության արդյունք հաստատված են համարվում մեղավորության մասին նշումները:

2) Ելակետ 1-ում պատահարին մասնակից առնվազն 2 վարորդների կողմից կատարվել է «Մեղավոր եմ մասամբ» նշումը, իսկ մյուսների (առկայության դեպքում) կողմից՝ «Մեղավոր չեմ ամբողջությամբ» նշումը, և «Մեղավոր եմ մասամբ» նշում կատարած վարորդների կամ նրանցից մեկի վարած ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը պատահարի պահին ապահովագրած ապահովագրական ընկերությունը կամ ընկերությունները (գործող ԱՊՊԱ պայմանագրի բացակայության դեպքում՝ Բյուրոն) համաձայն են այդ նշումներին: Սույն ենթակետով նախատեսված դեպքում մեղավորության մասին նշումներին համաձայնություն տրամադրած ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից իրականացվող հատուցման կարգավորման գործընթացում որպես փորձաքննության արդյունք հաստատված են համարվում մեղավորության մասին նշումները, եթե մինչև այդ համաձայնություն չտրամադրած ապահովագրական ընկերության կողմից նշանակված փորձաքննությամբ այլ մեղավորություն չի որոշվել: ***(7-րդ կետը փոփ. է 24.05.2016 թիվ 16-L)***

8. ԱՊՊԱ գծով Բյուրոյի կրկնակի կամ ստուգիչ փորձաքննությունը չի կարող իրականացվել տվյալ ապահովագրական պատահարի հետ կապված առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից:

9. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինը և քրեական հետապնդման մարմինները սույն կանոնների 7-րդ կետով նախատեսված դեպքերում համարվում են Խորհրդի կողմից որակավորված՝ առանց սույն կանոններով նախատեսված համապատասխան ընթացակարգերի պահպանման: Սույն կանոններով փորձագետին և նրա հետ կնքվող պայմանագրին, ինչպես նաև փորձագիտական եզրակացությանը ներկայացվող պահանջները չեն տարածվում Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի և քրեական հետապնդման մարմինների վրա:

10. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը սույն կանոնների 7-րդ կետով նախատեսված դեպքերում համարվում են Խորհրդի կողմից որակավորված՝ առանց սույն կանոններով նախատեսված համապատասխան ընթացակարգերի պահպանման:

11. Սույն կանոնների 9-րդ և 10-րդ կետերում նշված փորձագետներից բացի մնացած փորձագետները որակավորվում, և ապահովագրական ընկերությունների հետ նրանց կնքած պայմանագրերը գրանցվում են (գրանցվում են նաև Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի

Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված պայմանագրերը) սույն կանոններով սահմանված ընդհանուր կարգով:

12. Խորհրդի կողմից անձի ներկայացրած փորձագետի որակավորում տրամադրելու դիմումը մերժվելու դեպքում տվյալ անձը որակավորման տրամադրումը մերժելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, չի կարող փորձագետի որակավորում տրամադրելու նոր դիմում ներկայացնել Բյուրո:

13. Բյուրոն իր ինտերնետային կայքի «Փորձագետներ» բաժնում հրապարակում է փորձագետների վերաբերյալ սույն կանոններով նախատեսված տեղեկատվությունը: Բյուրոյի կողմից փորձագետների որակավորման փաստը հավաստվում է իր ինտերնետային կայքում վերջիններիս մասին տեղեկատվության հրապարակմամբ: Բյուրոյի ինտերնետային կայքում հրապարակված փորձագետների տվյալների թարմացումները կատարվում են Բյուրոյի կողմից համապատասխան տեղեկատվությունը ստացվելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

14. ***(14-րդ կետը ուժը կորցրել է 24.05.2016 թիվ 16-L)***

15. ***(15-րդ կետը ուժը կորցրել է 24.05.2016 թիվ 16-L)***

ԳԼՈՒԽ 3.1
ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

15.1. Փորձագետը փորձաքննությունն իրականացնում է բացառապես հետևյալ ելակետային տվյալների հիման վրա՝

1) պատվիրատուի կողմից սույն կանոնների համաձայն ներկայացված ելակետային տվյալները,

2) փորձագետի նախաձեռնությամբ կատարված՝ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների հետազոտության արդյունքում ստացված՝ ավտոտրանսպորտային միջոցի վրա առկա ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից (գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալները: Ընդ որում՝ նման նախաձեռնության դեպքում փորձագետն ավտոտրանսպորտային միջոցի զննությունն իրականացնում է իր հաշվին՝ կազմակերպելով իր ներկայացուցչի այցելությունն ավտոտրանսպորտային միջոցի՝ պատվերում նշված գտնվելու վայրը: Փորձագետի կողմից՝ իր հաշվին զննությունը կազմակերպելու՝ սույն ենթակետով նախատեսված պահանջը գործում է, եթե ավտոտրանսպորտային միջոցը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

15.2. Փորձագետը փորձաքննության համար իրեն տրամադրված փաստաթղթերում (նյութերում) արտացոլված տեղեկությունների միջև հակասություն հայտնաբերելու դեպքում պետք է առաջնություն տա պատահարի վայրում կատարված տեսագրությունում կամ լուսանկարներում արտացոլված ելակետային տվյալներին (առկայության դեպքում), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ավտոտրանսպորտային միջոցի վրա առկա ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից

(գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալները (դրանց առկայության կամ դրանց ստացման հետ կապված տեխնիկական հնարավորության դեպքում):

15.3. ԱՊՊԱ ոլորտում փորձաքննության իրականացման և համապատասխան եզրահանգումներ կատարելու առումով մեղավորություն է համարվում սույն կանոնների 15.4-րդ կետով նախատեսված խախտումը: Ընդ որում՝ նման մեղավորության որոշումը հիմնվում է՝

1) սույն կանոններով նախատեսված ելակետային տվյալների (փաստաթղթերի և նյութերի) հետազոտությունների վրա,

2) ճանապարհային երթևեկության կանոնները և անվտանգության նորմերը սահմանող միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքների և ենթաօրենսդրական ակտերի՝ մասնավորապես ճանապարհային երթևեկության կանոնների վրա՝ սույն կանոններով նախատեսված բացառություններով (վերապահումներով):

15.4. Փորձագետի եզրակացությամբ մեղավոր է ճանաչվում այն անձը, ով, ըստ սույն գլխում առկա ելակետային տվյալների հետազոտության արդյունքների, խախտել է սույն գլխում նշված իրավական ակտերից որևէ մեկով սահմանված որևէ պահանջ, և ում խախտումն ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում պատահարի առաջացման հետ: Ընդ որում, վարորդի մեղավորության որոշման համար հաշվի են առնվում բացառապես նրա կողմից փաստացի կատարված գործողությունները, որի արդյունքում վնաս է պատճառվել մեկ այլ ավտոտրանսպորտային միջոցի և (կամ) գույքի և (կամ) անձի, և որպես մեղավորությունը բացառող կամ դրա չափը նվազեցնող հիմք հաշվի չեն առնվում պատահարին ուղեկցող և (կամ) պատահարի առաջացման պատճառ (կամ պատճառներից մեկը) հանդիսացող հետևյալ գործոնները՝

1) ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը,

2) պատահարի պահին եղանակային և ճանապարհային պայմանները, տեսանելիությունը,

3) երրորդ անձանց կամ կենդանիների գործողությունները,

4) վարորդների առողջական, ֆիզիոլոգիական և (կամ) հոգեբանական վիճակը,

5) վարորդի կողմից պատահարը կանխելու տեխնիկական հնարավորությունը, եթե առկա չեն պատահարն առաջացրած՝ սույն կանոններով նախատեսված այլ խախտումներ:

15.5. Փորձաքննության ժամանակ պատահարում ներգրավված որևէ ավտոտրանսպորտային միջոցի արագությունը օբյեկտիվ չափման տվյալներով (ծրագրերով) չպարզվելու դեպքում փորձագետի կողմից ընդունվում է, որ նախքան վտանգը հայտնաբերելը համապատասխան վարորդը երթևեկել է տվյալ իրավիճակում թույլատրելի առավելագույն արագությամբ:

15.6. Այն դեպքում, երբ սույն կանոններով փորձաքննության համար նախատեսված ելակետային տվյալներից, ըստ փորձագետի, բխում է երկու հավասարազոր հավանականություն ունեցող վթարի մեխանիզմ, ապա փորձագետն իր եզրակացությամբ մեղավոր է ճանաչում բոլոր այն անձանց, ովքեր մեղավոր են իր կողմից ստացված վթարի հավանական տարբերակներից թեկուզ մեկի պարագայում:

(Գլուխ 3.1-ը լրաց. է 24.05.2016 թիվ 16-L)

ԲԱԺԻՆ 3

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

ԳԼՈՒԽ 4

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

16. Ֆիզիկական անձ փորձագետը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

1) ունի բարձրագույն կրթություն,

2) ճանաչված չէ անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

3) դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն,

4) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված չէ փորձաքննության (դրա որևէ տեսակի) ոլորտում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ ավտոտեխնիկական փորձաքննությամբ զբաղվելու իրավունքից,

5) քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,

6) ճանաչված չէ սնանկ և չունի ժամկետանց պարտավորություններ,

7) չունի վատ համբավ կամ հեղինակություն,

8) ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների բացահայտման համար անհրաժեշտ բոլոր տեսակի փորձաքննությունների իրականացման համար ունի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի և (կամ) ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ստեղծված դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից շնորհված որակավորում կամ օտարերկրյա հեղինակավոր կազմակերպության կողմից վերջին հինգ տարվա ընթացքում տրված համապատասխան որակավորման վկայական: Ընդ որում, օտարերկրյա կազմակերպությունների կողմից տրված փաստաթղթերի կամ որակավորման վկայականների՝ Բյուրոյի կողմից ընդունելիությունը որոշում է Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը),

9) վերջին տասը տարիների ընթացքում ունի առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների փորձաքննության ոլորտում,

10) ունի փորձագետի համար բավարար մասնագիտական և գործարար որակներ, մասնավորապես՝

ա. տեղեկացվածությունը ԱՊՊԱ ոլորտի իրավական ակտերին և սույն կանոններում արտացոլված սկզբունքներին և պահանջներին,

բ. տեղեկացվածությունը ճանապարհային երթևեկության անտանգության վերաբերյալ ՀՀ իրավական ակտերին և ճանապարհային երթևեկության կանոններին,

գ. հաղորդակցման հմտությունները և կազմակերպչական ձիրքը,

դ. արագ կողմնորոշվելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունը,

ե. աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքը և բարձր պատասխանատվության զգացումը,

զ. օբյեկտիվ և անկողմնակալ որոշումներ ընդունելու կարողությունը,

11) սույն կանոնների 17-րդ կետի 6-րդ ենթակետից բխող պատասխանատվությունն ապահովագրված է որևէ ապահովագրական ընկերության կողմից, ընդ որում, մեկ

պատահարի գծով ապահովագրական գումարի չափը չպետք է պակաս լինի ըստ յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի անձնական և գույքին պատճառված վնասների համար համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված առավելագույն ապահովագրական գումարից (սույն պահանջը կիրառվում է փորձագետի հետ կնքված աշխատանքային կամ պատվիրակման պայմանագրի գրանցման պահից և պայմանագրի գործողության ընթացքում),

12) ունենա Բյուրոյի համապատասխան կանոններով նախատեսված կարգով տրված՝ հետևյալ ոլորտներում մասնագիտական գիտելիքների թեսթավորման ժամանակ դրական արդյունք ցուցաբերած լինելը հավաստող գործող հավաստագիր՝

ա. ԱՊՊԱ ոլորտը կարգավորող օրենքներ և Բյուրոյի կանոններ (ընդհանուր) և

բ. ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննության իրականացում (մասնագիտական):

ԳԼՈՒԽ 5

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ) ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

17. Ապահովագրական ընկերության (փորձագիտական կազմակերպության) և ֆիզիկական անձ փորձագետի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը պետք է առնվազն պարունակի՝

1) պայմանագրի գործողության ժամկետները և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը,

2) թույլատրված փորձաքննության տեսակները (շրջանակը),

3) փորձագետի պարտավորությունը՝ հրաժարվելու փորձաքննություն իրականացնելուց այն դեպքերում, երբ ինքը փոխկապակցված է պատահարի մասնակիցներից որևէ մեկի հետ կամ որևէ կերպով առկա է շահերի բախում,

4) փորձագետի պարտավորությունը՝ փորձաքննության իրականացման գործընթացում առաջնորդվել օրենքով և ԱՊՊԱ ոլորտում փորձաքննության ոլորտը կարգավորող Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներով և սկզբունքներով, և ապահովագրական ընկերության (փորձագիտական կազմակերպության) պարտավորությունը՝ այդ պահանջների կամ դրանց փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ (փորձագիտական կազմակերպության դեպքում՝ այդ պահանջների կամ դրանց փոփոխությունների մասին իրազեկվելու նույն օրը) պատշաճ կերպով ծանոթացնել փորձագետին համապատասխան կանոններին և դրանց փոփոխություններին,

5) նշում այն մասին, որ փորձագետը ծանոթ է Բյուրոյի կողմից սահմանված դեպքերում և կարգով փորձագետների որակավորումից զրկման, ինչպես նաև փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցման և գրանցումից հանելու (ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրի դեպքում) հիմքերին, կարգին և հետևանքներին,

6) փորձագետի լիակատար նյութական պատասխանատվությունը իր կողմից փորձաքննության իրականացման ընթացքում իր մասնագիտական սխալի կամ անփութության, ինչպես նաև դիտավորյալ գործողությունների հետևանքով տուժողին,

նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասների համար, ինչպես նաև դրույթ՝ առ այն, որ փորձագետը ընդունում է, որ սույն ենթակետից բխող պատասխանատվությունը մասնավորապես ենթադրում է իր անվերապահ պարտավորությունը Բյուրոյի կամ ապահովագրական ընկերության պահանջով լրիվ ծավալով հատուցել տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասը, եթե ստուգիչ փորձաքննության արդյունքներով իր տված եզրակացությունը հիմնովին փոփոխվել է (որի համար Բյուրոյի կողմից կիրառվել է համապատասխան պատասխանատվության միջոց), սակայն օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է իր եզրակացության հիման վրա (վնասի չափը հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե որքան ապահովագրական հատուցում կտրամադրվեր կամ չէր տրամադրվի վնաս կրած անձին կամ նրա կողմից, եթե հատուցման հիմքում դրվեին ստուգիչ փորձաքննության արդյունքները), բացառությամբ եթե իր տված եզրակացության հավաստիությունը հաստատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով,

7) փորձագետի պարտավորությունը իր կողմից կատարված փորձաքննության գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի, Բյուրոյի ստուգիչ փորձաքննությունների գործընթացներում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցելու և հիմնավորելու իր կողմից կատարված փորձաքննության արդյունքները,

8) փորձագետի պարտավորությունը՝ ապահովագրական ընկերության կողմից համապատասխան հանձնարարականն ստանալուց հետո՝ առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել (հանձնարարությունը միաժամանակ մի քանի փորձագետի տրամադրվելու դեպքում՝ մյուս փորձագետների հետ տրամադրել) փորձագիտական եզրակացություն կամ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր բացատրություն,

9) այն աշխարհագրական ծածկույթը, որի շրջանակներում փորձագետը պարտավորվում է կատարել պայմանագրով իրեն պատվիրված փորձաքննությունը,

10) փորձագետի պարտավորությունը՝ օրենքով սահմանված կարգով պահպանելու պայմանագրի շրջանակներում իրականացված փորձաքննության գործընթացում իրեն հայտնի դարձած ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների գաղտնիությունը:

ԳԼՈՒԽ 6

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

18. Ապահովագրական պատահարի պատճառների ֆիզիկական անձ փորձագետի որակավորումը ենթադրում է սույն կանոններով սահմանված ֆիզիկական անձին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգում և Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) կողմից սույն կանոնների 16-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված հարցերի շրջանակներում հարցազրույցի անցկացում: Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) փորձագետի որակավորում տրամադրելու դիմում ներկայացրած անձին կարող է չհրավիրել հարցազրույցի այն դեպքերում, երբ նա

նախկինում արդեն մեկ անգամ որակավորվել է Բյուրոյի կողմից և ԱՊՊԱ ոլորտում նրա իրականացրած մասնագիտական գործունեության ընթացքում խախտումներ չեն արձանագրվել:

19. Ֆիզիկական անձ փորձագետի որակավորում ստանալու համար թեկնածուն Բյուրո է ներկայացնում՝

1) դիմում որակավորում ստանալու համար (համաձայն ձև 1-ի),

2) անձը հավաստող փաստաթղթի պատճենը,

3) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված դիպլոմի պատճենը,

4) հայտարարություն սույն կանոնների 16-րդ կետի 2-ից 6-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի բացակայության վերաբերյալ,

5) սույն կանոնների 16-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված որակավորումը հավաստող որակավորման վկայականի կամ հավաստող այլ փաստաթղթի պատճենը,

6) սույն կանոնների համապատասխանաբար 16-րդ կետի 9-րդ ենթակետով նախատեսված փորձը հիմնավորող փաստաթղթեր:

20. Բյուրոյի գործադիր տնօրենը և (կամ) Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը) կարող են թեկնածուից պահանջել նաև սույն կանոնների 19-րդ կետում արտացոլված փաստաթղթերի կամ տեղեկատվության արժանահատավատությունը հիմնավորող այլ տվյալներ, նյութեր, փաստաթղթեր և տեղեկանքներ:

21. Որակավորման հանձնաժողովը ֆիզիկական անձ փորձագետների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումն իրականացնում է սույն կանոնների 19-րդ կետում նշված փաստաթղթերը Բյուրո ներկայացնելու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Բյուրոն տեղեկացնում է թեկնածուին հարցազրույցի հրավիրելու մասին՝ Որակավորման հանձնաժողովի այն նիստից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ, որտեղ ընդգրկված է տվյալ թեկնածուի որակավորման կամ որակավորումը մերժելու մասին հարցը:

22. Փաստաթղթերը ոչ ամբողջական կամ թերի լինելու դեպքում Բյուրոյի գործադիր տնօրենը թեկնածուին որակավորում տալու հարցը Որակավորման հանձնաժողով չի ներկայացնում և թեկնածուի կողմից դիմումը ստանալու պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր իրազեկում է թեկնածուին այդ մասին: Ծանուցման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, թեկնածուի կողմից բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը:

23. Խորհրդի կողմից փորձագետների որակավորումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) Որակավորման հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և բանավոր հարցազրույցի (նման հարցազրույց անցկացվելու դեպքում) արդյունքում կայացնում է դիմում ներկայացրած անձին որակավորելու մասին դրական կամ բացասական եզրակացություն,

2) Որակավորման հանձնաժողովի կողմից բացասական եզրակացություն կայացվելու դեպքում թեկնածուի դիմումը համարվում է մերժված: Որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն կայացվելու դեպքում համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Բյուրոյի խորհրդի բոլոր անդամներին՝ բացառությամբ այն անդամների, որոնք մասնակցել են որակավորման հանձնաժողովի տվյալ նիստին,

3) Սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով որակավորման հանձնաժողովի որոշումն ուղարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Բյուրոյի խորհրդի առնվազն երեք անդամից (ներառյալ՝ հանձնաժողովի կազմում դեմ քվեարկած խորհրդի անդամները) հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ անհամաձայնություն չստացվելու դեպքում դիմում ներկայացրած անձը համարվում է Բյուրոյի խորհրդի կողմից որակավորված Որակավորման հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումը կայացվելու պահից,

4) Սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով Բյուրոյի առնվազն երեք անդամի անհամաձայնությունն ստացվելու դեպքում դիմում ներկայացրած անձի որակավորման հարցն ընդգրկվում է Բյուրոյի խորհրդի առաջիկա նիստի օրակարգում և ընդունվում ընդհանուր կարգով:

24. Սույն կանոնների 23-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետով նախատեսված կարգով փորձագետին որակավորելու պահից՝ 10-օրյա ժամկետում, Բյուրոն իր ինտերնետային կայքում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը, թույլատրված գործունեությունը, որակավորման գործողության ժամկետը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից կամ փորձագիտական կազմակերպությունը, որի կազմում գործում է տվյալ փորձագետը (առկայության դեպքում), և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու կամ որակավորումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

25. Փորձագետի որակավորումը տրվում է մինչև սույն կանոնների 16-րդ կետի 12-րդ ենթակետով նախատեսված հավաստագրի վավերության ժամկետի ավարտը: Ընդ որում, փորձագետի կողմից համապատասխան նոր հավաստագիր ստանալու դեպքում նրա որակավորումը համարվում է երկարաձգված մինչև այդ հավաստագրի գործողության ժամկետի ավարտը:

26. Որակավորում ստացած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հաշվառվում է Բյուրոյում վարվող էլեկտրոնային գրանցամատյանում, որտեղ գրառվում են որակավորված անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, հեռախոսահամարը, թույլատրված գործունեությունը, որակավորման գործողության ժամկետը, պայմանագրի գրանցման ամսաթիվը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից կամ փորձագիտական կազմակերպության անվանումը, որի կազմում գործում է տվյալ փորձագետը (առկայության դեպքում), փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու կամ որակավորումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

27. Որակավորում ստանալու համար Բյուրո դիմած, սակայն որակավորում չստացած փորձագետների վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես հաշվառվում է Բյուրոյի համապատասխան էլեկտրոնային գրանցամատյանում:

28. Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) մերժում է թեկնածուին որակավորում տրամադրելը, եթե՝

1) Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) հիմնավորված կարծիքով թեկնածուն չունի փորձագետի համար բավարար մասնագիտական և գործարար որակներ,

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կանոններին, կամ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,

3) սույն կանոնների 16-րդ կետի 8-րդ ենթակետում նշված կազմակերպության կողմից տրված որակավորման վկայականը Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) կողմից ընդունելի չէ,

4) թեկնածուն դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում Բյուրոյի կողմից զրկվել է որակավորումից՝ բացառությամբ սույն կանոնների 31-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված դեպքերի,

5) որակավորում տրամադրելու՝ թեկնածուի նախորդ մերժված դիմումից հետո մեկ ամիսը չի լրացել,

6) թեկնածուն չունի սույն կանոնների համապատասխանաբար 16-րդ կետի 12-րդ ենթակետով նախատեսված գործող հավաստագիր:

29. Խորհուրդը նախազգուշացնում է փորձագետին, զրկում է նրան որակավորումից կամ կասեցնում է նրա որակավորման գործողությունը Որակավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ սույն կանոնների 23-րդ կետով սահմանված կարգով: Խորհուրդը կարող է նախազգուշացնել փորձագետին, որակավորումից զրկել նրան կամ կասեցնել նրա որակավորման գործողությունը սույն կանոնների համապատասխանաբար 30-րդ, 31-րդ կամ 32-րդ կետով նախատեսված դեպքերում:

30. Խորհուրդը կարող է նախազգուշացնել փորձագետին (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե նրա կողմից խախտվել են իր հետ կնքված պայմանագրի՝ սույն կանոնների 17-րդ կետի 3)-րդ, 4)-րդ, 7)-րդ, 8)-րդ, 10)-րդ ենթակետերով նախատեսված պահանջները, կամ ստուգիչ փորձաքննության արդյունքներով փորձագետի տրված եզրակացությունը հիմնովին փոփոխվել է, և այն բողոքարկված չէ կամ բողոքարկման բոլոր փուլերի ավարտից հետո փորձագետի եզրակացությունը մնացել է հիմնովին փոփոխված:

31. Խորհուրդն իրավունք ունի զրկել փորձագետին որակավորումից (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) պարզվում է, որ վերջինս որակավորման կամ գրանցման փուլում ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ փաստաթղթեր,

2) սույն կանոնների 32-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված հիմքով փորձագետի որակավորման գործողությունը կասեցնելու ժամկետի ավարտից հետո չեն վերացել կասեցման հիմքերը,

3) Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) հիմնավոր կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ փորձագետի կողմից պատահարի առաջացման պատճառների փորձաքննության իրականացումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների գործընթացի անաչառությունը,

4) վերջին 1 տարվա ընթացքում փորձագետի նկատմամբ երկրորդ անգամ է կիրառվում նախազգուշացում կամ Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կարծիքով սույն կանոնների 30-րդ կետով նախատեսված՝ փորձագետի կողմից թույլ տրված խախտման համար նախազգուշացման կիրառումը չի համապատասխանում խախտման ծանրությանը կամ չի կարող ապահովել փորձագետի կողմից հետագայում նմանատիպ խախտումների կատարման բացառումը:

32. Խորհուրդն իրավունք ունի կասեցնել փորձագետի որակավորման գործողությունը (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) պարզվում է, որ նա չի բավարարում սույն կանոններով փորձագետի համար սահմանված պահանջներին,

2) Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ փորձագետի կողմից պատահարի առաջացման պատճառների փորձաքննության իրականացումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների գործընթացի անաչառությունը,

3) փորձագետը սույն կանոնների 30-րդ կետով նախատեսված դեպքերում բողոքարկել է ստուգիչ փորձաքննության արդյունքները:

33. Փորձագետի որակավորումը կարող է կասեցվել որոշակի ժամկետով կամ մինչև կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացումը, բայց բոլոր դեպքերում՝ ոչ ավելի, քան 6 ամիսը: Կասեցման ժամանակահատվածում համապատասխան անձը համարվում է որակավորում չունեցող և նրան չի կարող հանձնարարվել ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների որևէ փորձաքննություն:

34. Խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում փորձագետի որակավորումը, եթե՝

1) փորձագետը ներկայացրել է համապատասխան գրավոր միջնորդագիր,

2) փորձագետը մահացել է:

ԳԼՈՒԽ 7

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

35. Ֆիզիկական անձ փորձագետի հետ կնքված աշխատանքային և պատվիրակման պայմանագրի գրանցման համար ապահովագրական ընկերությունը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Ապահովագրական ընկերության միջնորդագիր՝ փորձագետի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը գրանցելու համար (համաձայն ձև 2-ի),

2) Ապահովագրական ընկերության և փորձագետ աշխատակցի աշխատանքային պայմանագրի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում),

3) Որակավորված փորձագետի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկանք (համաձայն ձև 3-ի): Ընդ որում տեղեկանքում նշված փոխկապակցված անձանց վերաբերյալ յուրաքանչյուր փոփոխության դեպքում փորձագետը պարտավոր է Բյուրո ներկայացնել նոր տեղեկանք՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10-օրյա ժամկետում,

4) Սույն կանոնների 16-րդ կետի 11-րդ ենթակետով նախատեսված ապահովագրության պայմանագրի պատճենը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և, առկայության դեպքում, կնիքով,

5) Ֆիզիկական անձ փորձագետի հետ կնքվող պայմանագրի գրանցումն իրականացնելու համար սույն կետի 6)-րդ ենթակետով սահմանված վճարի իրականացումը հավաստող փաստաթղթի պատճենը:

6) Ֆիզիկական անձ փորձագետի հետ կնքվող պայմանագրի գրանցման համար գանձվում է գրանցման վճար 10.000 ՀՀ դրամի չափով:

36. Կոմիտեն ֆիզիկական անձ փորձագետի հետ կնքված աշխատանքային պայմանագրի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունում է սույն կանոնների 35-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Գործադիր տնօրենը Կոմիտեի՝ սույն կետով նախատեսված դրական որոշման հիման վրա պայմանագրի գրանցումն իրականացնում է պայմանագրի գործողության ժամկետով, սակայն ոչ ավելի, քան փորձագետին տրված որակավորման ժամկետի ավարտը:

37. Կոմիտեն որոշում է կայացնում փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցումը մերժելու մասին, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են կամ չեն համապատասխանում սույն կանոններին, կամ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,

2) որակավորված փորձագետին Բյուրոյի կողմից տրված որակավորման գործողության ժամկետն ավարտվել է կամ փորձագետը զրկվել է որակավորումից կամ փորձագետի որակավորումը կասեցված է կամ որակավորումն ուժը կորցրած է ճանաչվել,

3) Կոմիտեի կողմից որոշում կայացնելու պահին Բյուրոյում գրանցված է տվյալ ապահովագրական ընկերության և փորձագետի միջև կնքված պայմանագիր, որով փորձագետին իրավունք է վերապահվում իրականացնել ԱՊՊԱ պատահարների հետևանքով առաջացած վնասի գնահատում:

38. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է որակավորված փորձագետի հետ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելուց կամ փոփոխելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, այդ մասին հայտնել Բյուրոյին՝ նշելով նաև որակավորված փորձագետի հետ աշխատանքային պայմանագրի դադարեցման հիմքը:

39. Գործադիր տնօրենը Կոմիտեի որոշման հիման վրա գրանցումից հանում է փորձագետի հետ կնքված պայմանագիրը, եթե՝

1) գրանցումից հետո փորձագետի և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրի դրույթները փոփոխվել են, և այդ փոփոխության արդյունքում պայմանագիրը այլևս չի համապատասխանում սույն կանոնների պահանջներին, կամ պայմանագրի դրույթները չեն համապատասխանեցվել սույն կանոններում կատարված փոփոխություններին,

2) գրանցումից հետո պարզվել է, որ գրանցման ժամանակ Բյուրո են ներկայացվել կեղծ կամ անարժանահավատ փաստաթղթեր կամ տեղեկություններ,

3) գրանցումից հետո փորձագետը զրկվել է փորձագետի որակավորումից կամ ուժը կորցրել է նրա որակավորումը,

4) փորձագետի և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագիրը լուծվել է:

ԲԱԺԻՆ 4

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 8

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

40. Փորձագիտական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

1) ունի իրավաբանական անձի կարգավիճակ,

2) նշանակալից մասնակիցները, խորհրդի նախագահը և անդամները, գործադիր մարմնի ղեկավարը բավարարում են սույն կանոնների 16-րդ կետի 2-ից 7-րդ ենթակետերում նշված պահանջներին,

3) ունի առնվազն 5 աշխատակից, որոնք ունեն սույն կանոնների համաձայն տրված փորձագետի որակավորում,

4) սույն կանոնների 41-րդ կետի 9-րդ ենթակետից բխող պատասխանատվությունն ապահովագրված է որևէ ապահովագրական ընկերության կողմից, ընդ որում, մեկ պատահարի գծով ապահովագրական գումարի չափը չպետք է պակաս լինի ըստ յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի անձնական և գույքին պատճառված վնասների համար համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված առավելագույն ապահովագրական գումարից (սույն պահանջը կիրառվում է փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցման պահից և միայն պայմանագրի գործողության ընթացքում):

ԳԼՈՒԽ 9

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

41. Փորձագիտական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերն առնվազն պետք է պարունակեն՝

1) պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հիմքերն ու կարգը,

2) պատվերներ տալու ձևը և այն փորձագետին փոխանցելու եղանակը,

3) փորձաքննության շրջանակները, որոնք տվյալ պայմանագրի շրջանակներում պետք է իրականացվեն փորձագետի կողմից,

4) փորձագետի վարձատրության սկզբունքներն ու վարձատրության վճարման ժամկետները,

5) փորձագետի պարտավորությունը՝ հրաժարվելու փորձաքննություն իրականացնելուց այն դեպքերում, երբ ինքը փոխկապակցված է պատահարի մասնակիցներից որևէ մեկի հետ կամ որևէ կերպով առկա է այլ շահերի բախում:

6) փորձագետի պարտավորությունը՝ փորձաքննության իրականացման գործընթացում առաջնորդվել օրենքով և ԱՊՊԱ ոլորտում փորձաքննության ոլորտը կարգավորող Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներով և սկզբունքներով, և ապահովագրական ընկերության պարտավորությունը՝ այդ պահանջները կամ դրանց փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ պատշաճ կերպով ծանուցել փորձագետին համապատասխան կանոնների և դրանց փոփոխությունների մասին,

7) նշում այն մասին, որ փորձագետը ծանոթ է Բյուրոյի կողմից փորձագետների որակավորումից զրկման, ինչպես նաև իրենց միջև կնքված պայմանագիրը գրանցելու և գրանցումից հանելու հիմքերին, կարգին և հետևանքներին,

8) փորձագետի համաձայնությունը առ այն, որպեսզի տվյալ ապահովագրական ընկերությունը և Բյուրոյի ներկայացուցիչները պայմանագրի շրջանակներում կատարված փորձաքննության հետ կապված ցանկացած պահի իր մոտ կատարեն ուսումնասիրություններ և ստանան դրանց հետ կապված բացատրություններ և հիմնավորումներ, ինչպես նաև փորձագետի պարտավորությունը ցանկացած պահի ապահովագրական ընկերության կամ Բյուրոյի ներկայացուցիչների պահանջով նրանց տրամադրել փորձաքննության եզրակացությունը և գործընթացին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

9) փորձագետի պարտավորությունը հատուցել իր կողմից փորձաքննության իրականացման ընթացքում իր մասնագիտական սխալի կամ անփութության, ինչպես նաև դիտավորյալ գործողությունների հետևանքով տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասները, ինչպես նաև դրույթ՝ առ այն, որ փորձագետը ընդունում է, որ սույն ենթակետից բխող պատասխանատվությունը մասնավորապես ենթադրում է իր անվերապահ պարտավորությունը Բյուրոյի կամ ապահովագրական ընկերության պահանջով լրիվ ծավալով հատուցել տուժողին, նրա իրավահաջորդին, ապահովադրին, ապահովագրված անձին, ապահովագրական ընկերությանը և (կամ) Բյուրոյին պատճառված վնասը, եթե ստուգիչ փորձաքննության արդյունքներով իր տված եզրակացությունը հիմնովին փոփոխվել է (որի համար Բյուրոյի կողմից կիրառվել է համապատասխան պատասխանատվության միջոց), սակայն օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է իր եզրակացության հիման վրա (վնասի չափը հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե որքան ապահովագրական հատուցում կտրամադրվեր կամ չէր տրամադրվի վնաս կրած անձին կամ նրա կողմից, եթե հատուցման հիմքում դրվեին ստուգիչ փորձաքննության արդյունքները), բացառությամբ եթե իր տված եզրակացության հավաստիությունը հաստատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով,

10) փորձագետի պարտավորությունը իր կողմից կատարված փորձաքննության գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի փորձաքննությունների գործընթացներում, Բյուրոյի ստուգիչ փորձաքննություններում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթ-ներում, ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցելու և հիմնավորելու իր կողմից կատարված փորձաքննության արդյունքները,

11) փորձագետի պարտավորությունը՝ ապահովագրական ընկերության կողմից համապատասխան հանձնարարականն ստանալուց հետո՝ առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել փորձագիտական եզրակացություն կամ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր բացատրություն,

12) ***(12-րդ ենթակետը ուժը կորցրել է 24.05.2016 թիվ 16-L)***

13) այն աշխարհագրական ծածկույթը, որի շրջանակներում փորձագետը պարտավորվում է կատարել պայմանագրով իրեն պատվիրված փորձաքննությունը,

14) փորձագետի պարտավորությունը՝ առանց ապահովագրական ընկերության (Բյուրոյի) ներկայացուցչի չիրականացնել ապահովագրական պատահարի առաջացման պատճառների հետ կապված քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ,

15) փորձագետի պարտավորությունը՝ օրենքով սահմանված կարգով պահպանելու պայմանագրի շրջանակներում իրականացված փորձաքննության գործընթացում իրեն հայտնի դարձած ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների գաղտնիությունը

16) փորձագետի պարտավորությունը՝ սույն կետի 11-րդ ենթակետով նախատեսված ժամկետները կետանցելու դեպքում յուրաքանչյուր կետանցված օրվա համար փորձաքննության պատվերը ներկայացրած անձին նրա պահանջով վճարել տույժ՝ փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարի 0.5 տոկոսի չափով: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժի գումարը փորձաքննության պատվեր ներկայացրած անձն իրավունք ունի անակցեպտ կարգով նվազեցնել փորձաքննության իրականացման դիմաց փորձագետին վճարվելիք գումարից: ***(41-րդ կետի 11-րդ և 16-րդ ենթակետերը փոփ. է 24.05.2016 թիվ 16-L)***

ԳԼՈՒԽ 10

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

42. Փորձագիտական կազմակերպությունները Խորհրդում անցնում են որակավորման փուլ, իսկ նրանց հետ կնքված պայմանագրերը՝ Կոմիտեում գրանցման փուլ: Որակավորման փուլը ենթադրում է սույն կանոններով փորձագիտական կազմակերպությունների նկատմամբ սահմանված պահանջների համապատասխանության ստուգման և կազմակերպության ղեկավարի հետ բանավոր հարցազրույցի (եթե նման հարցազրույց առկա է եղել) արդյունքում դիմում ներկայացրած կազմակերպության որակավորում կամ որակավորման տրամադրման մերժում:

43. Փորձագետի որակավորում ստանալու համար կազմակերպությունը Բյուրո է ներկայացնում՝

1) կազմակերպության իրավասու մարմնի կողմից ներկայացված դիմում՝ որակավորում ստանալու համար (համաձայն Ձև 1-ի),

2) կազմակերպության գրանցման վկայականի, հարկ վճարողի հաշվառման համարի (ռեզիդենտների համար) և կանոնադրության պատճենները՝ «Իսկական հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված դիմումատու կազմակերպության իրավասու մարմնի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում),

3) նշանակալից մասնակիցների, խորհրդի նախագահի և անդամների, գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված հայտարարություն սույն կանոնների 40-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պահանջներին բավարարելու վերաբերյալ,

4) կազմակերպության՝ սույն կանոնների 40-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված առնվազն թվով 5 աշխատակիցների անձը հաստատող փաստաթղթերի և նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները՝ հաստատված կազմակերպության իրավասու մարմնի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում):

44. Բյուրոյի գործադիր տնօրենը և (կամ) Խորհուրդը (Որակավորման հանձնաժողովը) կարող են փորձագիտական կազմակերպությունից պահանջել նաև նախորդ կետում արտացոլված փաստաթղթերի կամ տեղեկատվության արժանահատավատությունը հիմնավորող այլ տվյալներ, նյութեր, փաստաթղթեր և տեղեկանքներ:

45. Որակավորման հանձնաժողովը կարող է իր նիստին հրավիրել այն կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարին, որի որակավորման հարցը ներառված է նիստի օրակարգում՝ նիստից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնելով նրան այդ մասին:

46. Որակավորման հանձնաժողովը կազմակերպությանը որակավորելու կամ այն մերժելու մասին որոշում է ընդունում կազմակերպության կողմից՝ սույն կանոնների 43-րդ կետում նշված փաստաթղթերը Բյուրո ներկայացնելու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

47. Փաստաթղթերը ոչ ամբողջական և թերի լինելու դեպքում Բյուրոյի գործադիր տնօրենը կազմակերպությանը որակավորում տալու հարցը Որակավորման հանձնաժողովին չի ներկայացնում և կազմակերպության կողմից դիմումը ստանալու պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր իրազեկում է նրան այդ մասին: Ծանուցման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, թեկնածուի կողմից բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է ընդունված սկզբնական ներկայացման օրը:

48. Խորհրդի կողմից փորձագետների որակավորումն իրականացվում է սույն կանոնների 23-րդ կետով սահմանված ընթացակարգով:

49. Սույն կանոնների 48-րդ կետով նախատեսված կարգով փորձագետին որակավորելու պահից՝ 10-օրյա ժամկետում, Բյուրոն իր ինտերնետային կայքում հրապարակում է որակավորված փորձագիտական կազմակերպության անվանումը, թույլատրված գործունեությունը, որակավորման գործողության ժամկետը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու կամ որակավորումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

50. Որակավորման մասին տվյալները հաշվառվում են Բյուրոյում վարվող էլեկտրոնային գրանցամատյանում, որտեղ գրառվում են որակավորված փորձագիտական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության հիմնական հասցեն, հեռախոսահամարը, թույլատրված գործունեությունը, որակավորման գործողության ժամկետը, պայմանագրի գրանցման ամսաթիվը, ապահովագրական ընկերության անվանումը, որի հետ կնքված պայմանագիրը գրանցված է Բյուրոյի կողմից, փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն և նշումներ որակավորումից զրկված լինելու կամ որակավորումը կասեցնելու կամ որակավորումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

51. Որակավորում ստանալու համար Բյուրո դիմած, սակայն որակավորում չստացած փորձագիտական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես հաշվառվում է Բյուրոյի համապատասխան էլեկտրոնային գրանցամատյանում:

52. Որակավորման հանձնաժողովը (Խորհուրդը) մերժում է կազմակերպությանը որակավորում տալը, եթե՝

1) ներկայացված տվյալները Որակավորման հանձնաժողովի հիմնավոր կարծիքով լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն,

2) բավարար կամ լիարժեք ապահովված չեն սույն կանոնների 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հայտարարությունները կամ դրանք Որակավորման հանձնաժողովի (Խորհրդի) հիմնավորված կարծիքով չեն համապատասխանում իրականությանը,

3) կազմակերպության՝ փորձագետի որակավորում տրամադրելու մասին նախորդ մերժված միջնորդագրից հետո մեկ ամիսը չի լրացել,

4) թեկնածուն դիմում ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում Բյուրոյի կողմից զրկվել է փորձագետի որակավորումից՝ բացառությամբ սույն կանոնների 55-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված դեպքերի,

5) Որակավորման հանձնաժողովը, փորձագիտական կազմակերպության ղեկավարի հետ բանավոր հարցազրույցի արդյունքում (եթե նման հարցազրույց առկա է եղել), ունի ձևավորված ոչ դրական կարծիք փորձագիտական կազմակերպության աշխատանքի կազմակերպման սկզբունքների և մեխանիզմների մասին,

6) Որակավորման հանձնաժողովը որոշել է հրավիրել փորձագիտական կազմակերպության ղեկավարին հարցազրույց անցկացնելու համար, սակայն վերջինս անհիմն պատճառներով հրաժարվել է ներկայանալ:

53. Խորհուրդը նախազգուշացնում է փորձագետին, զրկում է նրան որակավորումից կամ կասեցնում է նրա որակավորման գործողությունը Որակավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ սույն կանոնների 23-րդ կետով սահմանված կարգով: Խորհուրդը կարող է նախազգուշացնել փորձագետին, որակավորումից զրկել նրան կամ կասեցնել նրա որակավորման գործողությունը սույն կանոնների համապատասխանաբար 54-րդ, 55-րդ կամ 56-րդ կետով նախատեսված դեպքերում:

54. Խորհուրդը կարող է նախազգուշացնել փորձագետին (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե

1) ստուգիչ փորձաքննության արդյունքներով փորձագետի տրված եզրակացությունը հիմնովին փոփոխվել է, և այն բողոքարկված չէ կամ բողոքարկման բոլոր փուլերի ավարտից հետո փորձագետի եզրակացությունը մնացել է հիմնովին փոփոխված,

2) նրա կողմից խախտվել են իր հետ կնքված պայմանագրի՝ սույն կանոնների 41-րդ կետի 5)-րդ, 6)-րդ, 8)-րդ, 10)-րդ, 11)-րդ, 14)-րդ և 15)-րդ ենթակետերով նախատեսված պահանջները:

55. Խորհուրդն իրավունք ունի զրկել փորձագետին որակավորումից (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) պարզվում է, որ վերջինս որակավորման կամ գրանցման փուլում ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ փաստաթղթեր,

2) սույն կանոնների 56-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված հիմքով փորձագետի որակավորման գործողությունը կասեցնելու ժամկետի ավարտից հետո չեն վերացել կասեցման հիմքերը,

3) Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) հիմնավոր կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ փորձագետի կողմից պատահարի առաջացման պատճառների փորձաքննության իրականացումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների գործընթացի անաչառությունը,

4) վերջին 1 տարվա ընթացքում փորձագետի նկատմամբ երկրորդ անգամ է կիրառվում նախազգուշացում կամ Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կարծիքով սույն կանոնների 54-րդ կետով նախատեսված՝ փորձագետի կողմից թույլ տրված խախտման համար նախազգուշացման կիրառումը չի համապատասխանում

խախտման ծանրությանը կամ չի կարող ապահովել փորձագետի կողմից հետագայում նմանատիպ խախտումների կատարման բացառումը:

56. Խորհուրդն իրավունք ունի կասեցնել փորձագետի որակավորման գործողությունը (ինչի մասին Բյուրոն հրապարակում է իր ինտերնետային կայքում), եթե՝

1) պարզվում է, որ նա չի բավարարում սույն կանոններով փորձագետի համար սահմանված պահանջներին,

2) Խորհրդի (Որակավորման հանձնաժողովի) կարծիքով ԱՊՊԱ ոլորտում տվյալ փորձագետի կողմից պատահարի առաջացման պատճառների փորձաքննության իրականացումը կարող է նպաստել զեղծարարությունների մեծացմանը, ինչպես նաև վտանգել ԱՊՊԱ ոլորտի պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների գործընթացի անաչառությունը,

3) փորձագետը սույն կանոնների 54-րդ կետի 1)-ին ենթակետով նախատեսված դեպքերում բողոքարկել է ստուգիչ փորձաքննության արդյունքները:

57. Փորձագետի որակավորումը կարող է կասեցվել որոշակի ժամկետով կամ մինչև կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացումը, բայց բոլոր դեպքերում՝ ոչ ավելի, քան 6 ամիսը: Կասեցման ժամանակահատվածում համապատասխան անձը համարվում է որակավորում չունեցող և նրան չի կարող հանձնարարվել ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների որևէ փորձաքննություն:

58. Սույն կանոնների 54-րդ կետով նախատեսված դեպքերում համապատասխան պատասխանատվության միջոցը (նախազգուշացում, որակավորումից զրկում կամ որակավորման գործողության կասեցում) փորձագիտական կազմակերպության դեպքում կարող է կիրառվել ինչպես կազմակերպության, այնպես էլ այն փորձագետի (փորձագետների) նկատմամբ, ով (ովքեր) անմիջականորեն կազմել է (են) փորձագիտական եզրակացությունը (հաշվետվությունը), ինչպես նաև միաժամանակ երկուսի նկատմամբ: Ընդ որում, ելնելով կոնկրետ հանգամանքներից՝ փորձագիտական կազմակերպության և նրա կազմում գործող ֆիզիկական անձ փորձագետների նկատմամբ կարող են կիրառվել տարբեր պատասխանատվության միջոցներ:

59. Խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում փորձագետի որակավորումը, եթե՝

1) փորձագետը ներկայացրել է համապատասխան գրավոր միջնորդագիր,

2) փորձագետը լուծարվել է կամ անվճարունակ (սնանկ) է ճանաչվել կամ վերակազմակերպվել է, բացառությամբ վերակազմավորման դեպքի, ինչպես նաև միացման դեպքում պահպանվող կազմակերպության և առանձնացման դեպքում՝ այն կազմակերպության, որից առանձնացվել են:

ԳԼՈՒԽ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

60. Փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը գրանցելու համար ապահովագրական ընկերությունը Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Ապահովագրական ընկերության միջնորդագիր՝ փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը գրանցելու համար (համաձայն Ձև 2-ի),

2) Ապահովագրական ընկերության և փորձագիտական կազմակերպության միջև կնքված պայմանագրի պատճենը՝ «Իսկական հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության իրավասու մարմնի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում),

3) փաստաթուղթ, որով հավաստվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերությանը տրված թույլտվությունը՝ համապատասխան գործառույթը տվյալ կազմակերպությանը պատվիրակելու վերաբերյալ (օրենսդրությամբ նման թույլտվություն ստանալու պահանջի առկայության դեպքում),

4) Որակավորված կազմակերպության հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկանք (համաձայն Ձև 3-ի): Ընդ որում, տեղեկանքում նշված փոխկապակցված անձանց վերաբերյալ յուրաքանչյուր փոփոխության դեպքում կազմակերպությունը պարտավոր է Բյուրո ներկայացնել նոր տեղեկանք՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ 10-օրյա ժամկետում,

5) սույն կանոնների 40-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ապահովագրության պայմանագրի պատճենը՝ «Իսկական հետ ճիշտ է» նշումով՝ հաստատված ապահովագրական ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ և, առկայության դեպքում, կնիքով,

6) փորձագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի գրանցումն իրականացնելու համար սույն կետի 7)-րդ ենթակետով սահմանված վճարի իրականացումը հավաստող փաստաթղթի պատճենը:

7) Փորձագիտական կազմակերպության հետ կնքվող պայմանագրի գրանցման համար գանձվում է գրանցման վճար 10.000 ՀՀ դրամի չափով:

61. Կոմիտեն փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշումն ընդունում է սույն կանոններով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Կոմիտեի կողմից սույն կետով նախատեսված դրական որոշում կայացվելու դեպքում Գործադիր տնօրենը գրանցում է պայմանագիրը, ընդ որում փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցումն իրականացվում է պայմանագրի գործողության ժամկետով, սակայն ոչ ավելի, քան փորձագիտական կազմակերպությանը տրված որակավորման ժամկետի ավարտը:

62. Կոմիտեն որոշում է կայացնում փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագրի գրանցումը մերժելու մասին, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կանոններին, կամ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,

2) փորձագիտական կազմակերպությանը Բյուրոյի կողմից տրված որակավորման գործողության ժամկետն ավարտվել է կամ փորձագիտական կազմակերպությունը Բյուրոյի կողմից զրկվել է որակավորումից, որակավորումը ուժը կորցրած է ճանաչվել կամ նրա որակավորումը ժամանակավորապես կասեցված է:

63. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը դադարելուց կամ փոփոխվելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, այդ մասին հայտնել Բյուրոյին՝ նշելով նաև պայմանագրի դադարեցման հիմքը:

64. Գործադիր տնօրենը Կոմիտեի որոշման հիման վրա գրանցումից հանում է փորձագիտական կազմակերպության հետ կնքված պայմանագիրը, եթե՝

1) գրանցումից հետո փորձագիտական կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրի դրույթները փոփոխվել են, և այդ փոփոխության արդյունքում պայմանագիրը այլևս չի համապատասխանում սույն կանոնների պահանջներին, կամ պայմանագրի դրույթները չեն համապատասխանեցվել սույն կանոններում կատարված փոփոխություններին,

2) գրանցումից հետո պարզվել է, որ գրանցման ժամանակ Բյուրո են ներկայացվել կեղծ կամ անարժանահավատ փաստաթղթեր կամ տեղեկություններ,

3) գրանցումից հետո փորձագիտական կազմակերպությունը զրկվել է փորձագետի որակավորումից կամ ուժը կորցրել է նրա որակավորումը,

4) փորձագիտական կազմակերպության և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագիրը լուծվել է:

ԲԱԺԻՆ 5

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ԳԼՈՒԽ 12

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

65. Փորձագետի կողմից տրվող եզրակացությունը պետք է բավարարի Ձև 4-ով սահմանված ձևին և բովանդակությանը, իսկ փորձաքննության արդյունքները փորձագետի կողմից պատվիրատուին պետք է տրամադրվեն Ձև 5-ով սահմանված ուղեկցող ծանուցմամբ: ***(65-րդ կետը լրաց. 24.05.2016 թիվ 16-Լ)***

65.1. Փորձագիտական եզրակացության հետևություններ բաժնում բոլոր դեպքերում պետք է ներկայացվեն փորձագետի հետևությունները պատահարի մեջ վարորդների մեղավորության վերաբերյալ՝ «մեղավոր է» կամ «մեղավոր չէ» հստակ ձևակերպմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փորձաքննության արդյունքում պարզվում է, որ նման պատահար իրականում տեղի ունենալ չէր կարող, որի դեպքում փորձագետի կողմից կատարվում է «ՃՏՊ ձևացում» նշումը: Պատվեր ներկայացնողի կողմից պատվերում Ձև 6-ի 2.1.2-րդ և (կամ) 2.1.3-րդ դաշտերով նախատեսված հարցադրումները ներկայացվելու դեպքում փորձագետը փորձագիտական եզրակացության հետևություններ բաժնում պետք է պարտադիր անդրադառնա նաև այդ հարցադրումներին: Ընդ որում, եթե պատվերին կից ներկայացված տվյալների և հանգամանքների կամ ավտոտրանսպորտային միջոցների հետքերի ուսումնասիրությունից փորձագետի կողմից պարզվել է, որ նման ելակետային տվյալներով պատահարը տեղի ունենալ չէր կարող, կամ այդպիսի պատահարի հետևանքով նման հետքեր չէին կարող առաջանալ, ապա փորձագետը, անկախ պատվերում նման պահանջ նախատեսված լինելու հանգամանքից, պետք է նաև նշի իրական վթարի մեխանիզմի պայմաններում մեղավորության բաշխվածության վերաբերյալ իր հստակ հետևությունը կամ կատարի «ՃՏՊ ձևացում» նշումը, եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ նման պատահար իրականում տեղի ունենալ չէր կարող: ***(65.1-րդ կետը լրաց. 24.05.2016 թիվ 16-Լ)***

65.2. Այն դեպքում, երբ պատահարում ներգրավված են երկուսից ավելի ավտոտրանսպորտային միջոցներ և փորձագետի կարծիքով տվյալ պատահարի

արդյունքում առաջացած տարբեր բախումներում առկա են վարորդների մեղավորության տարբեր բաշխվածություններ, ապա փորձագիտական եզրակացության հետևություններ բաժինը, նույն կառուցվածքի պահպանմամբ, լրացվում է լրացուցիչ հավելվածով, որտեղ նշումներ են կատարվում վարորդներից յուրաքանչյուրի մեղավորության կամ անմեղության մասին՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցներին և (կամ) այլ գույքին պատճառված առանձին վնասների: ***(65. 2-րդ կետը լրաց. 24.05.2016 թիվ 16-Լ)***

65.3. Փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր բացատրությունը պետք է տրվի՝ համաձայն Ձև 5-ի՝ նշելով փորձաքննության անհնարինություն առաջացնող հիմքերը: ***(65. 3-րդ կետը լրաց. 24.05.2016 թիվ 16-Լ)***

ԲԱԺԻՆ 6
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 13
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

66. Սույն կանոններով որակավորման, գրանցման կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի, Խորհրդի կամ Կոմիտեի կողմից բացասական որոշում կայացվելու կամ որակավորումից զրկելու (գրանցումից հանելու) դեպքում դիմում (միջնորդագիր) ներկայացրած անձը (համապատասխան հասցեատերը) պատվիրված նամակով կամ առձեռն հանձնելու միջոցով տեղեկացվում է տվյալ որոշման վերաբերյալ՝ այդ որոշումն ընդունվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով նախատեսված որոշումն ուժի մեջ է մտնում համապատասխան հասցեատիրոջը սույն կետով սահմանված կարգով ծանուցելուն հաջորդող օրը:

67. Սույն կանոններով որակավորման, գրանցման կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի, Խորհրդի կամ Կոմիտեի կողմից որոշում ընդունելու համար սահմանված ժամկետները տվյալ մարմնի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող են կասեցվել նրա կողմից, բայց ոչ ավելի, քան մեկ ամսով:

68. Սույն կանոններով որակավորման, գրանցման կամ ցանկացած այլ հարցի վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի, Խորհրդի կամ Կոմիտեի կողմից որոշում ընդունելու համար սահմանված ժամկետում այդ մարմինների կողմից դիմում (միջնորդագիր) ներկայացրած անձի դիմումը չմերժելու և սահմանված ժամկետը սույն կանոնների 67-րդ կետով սահմանված կարգով կասեցնելու մասին որոշում չկայացնելու դեպքում համարվում է, որ Բյուրոն ընդունել է դրական որոշում, և Բյուրոն (նրա համապատասխան մարմինը) պարտավոր է իրականացնել այն գործողությունները, որոնք, համաձայն սույն կանոնների, նա պետք է իրականացներ, եթե սահմանված ժամկետում ընդունած լիներ համապատասխան դրական որոշումը: Ընդ որում, այդ գործողությունների համար սահմանված ժամկետների հաշվարկն սկսվում է Բյուրոյի կողմից համապատասխան որոշումը կայացնելու համար նախատեսված ժամկետի վերջին օրը լրանալու պահից:

ԳԼՈՒԽ 15
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

69. Սույն կանոններով Բյուրոյի կողմից որակավորված և գրանցված համարվող Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնին և (կամ) քրեական հետապնդման մարմիններին փորձագետ համարելու դեպքում ապահովագրական ընկերությունը գրավոր տեղեկացնում է Բյուրոյին:

70. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սույն կանոններով նախատեսված համապատասխան գործառույթներ պատվիրակելու համար թույլտվություն ստանալու պահանջ սահմանվելու դեպքում, ապահովագրական ընկերությունը այդպիսի պահանջ սահմանվելուն հաջորդող 2 ամսվա ընթացքում պետք է Բյուրո ներկայացնի Բյուրոյի կողմից գրանցված պայմանագրի կողմ փորձագիտական կազմակերպությանը համապատասխան գործառույթը պատվիրակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերությանը տրված թույլտվությունը հավաստող փաստաթուղթ, հակառակ դեպքում Բյուրոն տվյալ փորձագետի հետ կնքված պայմանագիրը հանում է գրանցումից:

Ձև 1

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 18/12/2015թ թիվ 99-Լ որոշմամբ հաստատված կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
Գործադիր տնօրեն _____ -ին

Դ Ի Մ Ո Ւ Մ

ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնելու որակավորում ստանալու

Հարգելի _____,

Համաձայն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից հաստատված կանոնների կից ներկայացնում ենք ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնելու որակավորում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

Հավաստիացնում եմ (ենք), որ ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ (ենք), որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը: Սույն դիմումով տալիս եմ (ենք) համաձայնություն «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին՝ ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները ճշտելու նպատակով կատարել համապատասխան ստուգումներ և ուսումնասիրություններ, ինչպես նաև կատարել հարցումներ և ստանալ դրանց պատասխանները: Ներկայացված փաստաթղթերում և (կամ) տեղեկություններում ցանկացած փոփոխության դեպքում պարտավորվում եմ (ենք) 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Բյուրոյին:

Առդիր՝ _____ էջ:

Դիմող՝ _____

Անուն, ազգանուն (Ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը) ստորագրությունը

_____ Կ. Տ

բնակության (գործունեության) հասցե, հեռախոսահամար,

«___» _____20 թ.

Ձև 2
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 18/12/2015թ թիվ 99-Լ որոշմամբ հաստատված կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
Գործադիր տնօրեն _____ -ին

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

ԱՊՊԱ ոլորտում փորձագետի հետ կնքված պայմանագրի գրանցման

Հարգելի _____,

Համաձայն Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կողմից հաստատված կանոնների խնդրում ենք գրանցել

_____
_-ի
Փորձագիտական կազմակերպության անվանումը (որակավորված փորձագետի անուն ազգանունը, անձնագրային տվյալները)

հետ կնքված պայմանագիրը՝ որպես ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետ:

Առդիր՝ _____ էջ:

Ապահովագրական ընկերության իրավասու անձ՝
_____
Ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

Կ. Տ

«___» _____20 թ.

Ձև 3
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 18/12/2015թ թիվ 99-Լ որոշմամբ հաստատված կանոնների

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փորձագետի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց ցանկ

	Անուն, ազգանուն	*Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ*	*Բնակության վայր*	*Փոխկապակցվածության ձև*	*Աշխատանքի վայր*	*Պաշտոն*	*Հեռախոսահամար*
1.							
2.							
…							

Փորձագետի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ցանկ

	Կազմակերպության անվանում	*Գտնվելու վայր*	*Փոխկապակցվածության ձև*	*Հեռախոսահամար*
1.				
2.				
…				

Սույն տեղեկանքում իմ կողմից հայտարարված փոխկապակցված անձանց վերաբերյալ ցանկացած փոփոխության դեպքում պարտավորվում եմ Ապահովագրական ընկերություն և Բյուրո ներկայացնել նոր տեղեկանք՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10-օրյա ժամկետում:

Փորձագետի անուն, ազգանուն (անվանում) _____ _____
ստորագրություն ամսաթիվ

Ձև 4
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 25/04/2016թ թիվ 16-Լ որոշմամբ հաստատված կանոնների

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ (ՃՏՊ) ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ					
1.1.	ՃՏՊ-ի մասին արձանագրության համարը (Ելակետ 1)				
1.2.	Փորձագիտական եզրակացության համարը և եզրակացությունը կազմելու ամսաթիվը				
		համար	օր	ամիս	տարի
1.3.	Փորձաքննության պատվիրատուն	_____		☐ Բյուրո	
		☐ (նշվում է ԱՊ ընկերության անվանումը)			
1.4.	Պատվերի համարը և ստացման ամսաթիվը				
		համար	օր	ամիս	տարի
1.5.	Պատվերի տեսակը	☐ առաջնային փորձաքննություն		☐ լրացուցիչ փորձաքննություն	
		☐ կրկնակի փորձաքննություն		☐ ստուգիչ փորձաքննություն	
1.6.	ՃՏՊ-ին առնչություն ունեցող ավտոտրանսպորտային միջոցները (ՏՄ)	N	Մակնիշը	Հաշվառման համարանիշը կամ նույնացման (թափքի) համարը (h/h)	
		ՏՄ1			
		ՏՄ2			
		ՏՄ3			
		...			
1.7.	ՃՏՊ-ի հետևանքով ՏՄ-ներից բացի վնասված այլ գույքի մասին տեղեկատվություն *(լրացվում է առկայության դեպքում)*				
1.8.	Փորձաքննության գործընթացի սկիզբը				
		Սկզբի օր		ամիս	տարի
	Փորձաքննության գործընթացի ավարտը				
		Ավարտի օր		ամիս	տարի
1.9.	Փորձագետին փորձաքննության համար առաջադրված հարցերը	1	☑	Կատարել պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն և տալ վերջնական եզրակացություն, թե ում գործողություններով (անգործությամբ) է պայմանավորված տվյալ պատահարի առաջացումը	
		2	☐	Պարզել պատվերին կից ներկայացված ելակետային տվյալների համապատասխանությունը վթարի մեխանիզմին	
		3	☐	Պարզել ՏՄ-ների վրա առկա հետքերի համատեղելիությունը ներկայացված վթարի հետ (կատարել հետքաբանական հետազոտություն)	
2. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
2.1.	Փորձագետի կողմից կատարված պատահարի հանգամանքների ուսումնասիրությունները				
2.2.	Դեպքի վայրի և/կամ ՏՄ-ի մասով կատարված լրացուցիչ զննությունները, դրանց ամսաթվերը				

	(կատարվում է փորձագիտական անհրաժեշտության և/կամ համապատասխան պատվերի դեպքում՝ շարադրելով անհրաժեշտության հիմնավորումը)	
2.3.	Փորձաքննության ընթացքում կիրառված մեթոդաբանությունը և/կամ կիրառված համակարգչային ծրագրերը	
2.4.	Հետազոտության ընթացքում հայտնաբերված հակասությունները *(առկայության դեպքում)*	

3. ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1.	Կատարված հետազոտությունների արդյունքում փորձագետի կողմից վերականգնված ՃՏՊ նկարագրությունը	
3.2.	Փորձագետի եզրահանգումները ՃՏՊ առաջացման պատճառների վերաբերյալ *(այդ թվում՝ վարորդի և այլ անձանց կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ)*	
3.3.	Փորձագետի եզրահանգումները (հաստատումները) ՃՏՊ-ի հետևանքով վնասված գույքացանկի մասին	

3.4.	Փորձագետի հետևությունները ՃՏՊ-ում մեղավոր անձանց վերաբերյալ		☐	Մեղավոր է	☐	Մեղավոր չէ
		ՏՄ ՎԱՐՈՐԴ 1 (անուն, ազգանուն)	☐	Մեղավոր է	☐	Մեղավոր չէ
		ՏՄ ՎԱՐՈՐԴ 2 (անուն, ազգանուն)	☐	Մեղավոր է	☐	Մեղավոր չէ
		... Այլ անձինք	☐	Մեղավոր է	☐	Մեղավոր չէ
		.....	☐	Մեղավոր է	☐	Մեղավոր չէ
		Տեղի է ունեցել «ՃՏՊ ձևացում»	☐			

3.5.	Փորձագետի հետևությունները վթարի մեխանիզմին ելակետային տվյալներիհամապատասխանության վերաբերյալ *(պարտադիր լրացվում է պատվերի 1.9 կետի 2-րդ հարցադրումը ներկայացված լինելու դեպքում)*	☐	Պատվերին կից ներկայացված ելակետային տվյալները համապատասխանում են վթարի մեխանիզմին
		☐	Պատվերին կից ներկայացված ելակետային տվյալները չեն համապատասխանում վթարի մեխանիզմին
3.6.	Փորձագետի հետևությունները ՏՄ-ների վրա առկա հետքերի՝ վթարի հետ համատեղելիության վերաբերյալ *(պարտադիր լրացվում է միայն պատվերի 1.9 կետի 3-րդ հարցադրումը ներկայացված լինելու դեպքում)*	☐	ՏՄ-ների վրա առկա հետքերը համատեղելի են պատվերին կից ներկայացված վթարի հետ
		☐	ՏՄ-ների վրա առկա հետքերը համատեղելի չեն պատվերին կից ներկայացված վթարի հետ

4. ՓՈՐՁԱԳԵՏԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

4.1.	Փորձագիտական կազմակերպության անվանումը		
4.2.	Հասցեն, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն		
4.3.	Փորձագիտական կազմակերպության ղեկավար		
		(անուն, ազգանուն)	**(ստորագրություն) Կ.Տ**
4.4.	Կատարող փորձագետ		
		(անուն, ազգանուն)	**(ստորագրություն)**

Ձև 5

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 25/04/2016թ թիվ 16-Լ որոշմամբ հաստատված կանոնների

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Հերթական համարը			
Ծանուցում իրականացնողը			
	(նշվում է փորձագետի անունը կամ անվանումը)		
Ծանուցում ստացողը (Պատվիրատու)			

1. Սույն ծանուցմամբ տեղեկացնում ենք, որ՝		
☐	Պատվիրված փորձաքննությունը հնարավոր չէ իրականացնել հետևյալ ելակետային տվյալների բացակայության հիմքով՝	
☐	Իրականացվել է պատվիրված փորձաքննությունը, և համապատասխանաբար սույն ծանուցմանը կցված է հետևյալ փորձագիտական եզրակացությունը՝	
	Եզրակացության հերթական համարը	
	Եզրակացության էջերի քանակը	

2. ԾԱՆՈՒՑՈՂԻ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԱՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
Փորձագետը (փորձագիտական կազմակերպության ղեկավարը)		
	(անունը և ազգանունը և պաշտոնը)	(ստորագրություն)

Ձև 6
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 25/04/2016թ թիվ 16-Լ որոշմամբ հաստատված կանոնների

ՊԱՏՎԵՐ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատվերի ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Պատվերի հերթական համարը			
Փորձագետ			
	(անունը և ազգանունը կամ անվանումը)		

1. Ընդհանուր տվյալներ					
1.1	Պատվիրատու				
		(նշվում է պատվիրատուի անվանումը)			
1.2	Վնասված գույքի փաստացի գտնվելու վայրը, որտեղ հնարավոր է կատարել վնասված գույքի զննություն				
		մարզ	քաղաք/գյուղ	փողոց	այլ կողմնորոշիչ
1.3	Անձի անունը, ազգանունը և հեռախոսահամարը, ում հետ կարելի է կապ հաստատել վնասված գույքի զննություն իրականացնելու համար				

2. Պատվերի տեսակը	
2.1. Խնդրում ենք իրականացնել պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն՝ պատասխանելով հետևյալ հարցադրմանը (հարցադրումներին)՝	
2.1.1 Պարզել, թե ո՞ւմ գործողություններով (անգործությամբ) է պայմանավորված տվյալ պատահարի առաջացումը	
☐	2.1.2 Պարզել պատվերին կից ներկայացված ելակետային տվյալների համապատասխանությունը վթարի մեխանիզմին
☐	2.1.3 Պարզել ՏՄ-ների վրա առկա հետքերի համատեղելիությունը ներկայացված վթարի հետ (կատարել հետքաբանական հետազոտություն)

3. Փորձաքննության կատարման համար ներկայացվող փաստաթղթերը և նյութերը	
Փաստաթղթի (նյութի) անվանումը	**Էջերը կամ քանակը**

4. Պատվիրատուի իրավասու անձ		
	(պաշտոնը, անունը և ազգանունը)	**(ստորագրությունը)**